***272. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը դրված է եղել ս. Աստվածածնի մուտքի մոտ.***

Ի թուին :ՉԲ: (1253) ես Վաչէ, որդի Աքուասլայ կանգնեցի զխաչս պարոն Թուրքին. որք կարդայք յիշեցէք ի Քս.:

Ծանոթ. *Խաչքարն այժմ չկա. Թուրք անունը կասկածելի է (խմբ.)։*

*Հրատ. Ջալալեանց, II, 241։*

## 12. ԿԻՉԱՆ ԳՅՈՒՂ

*Գյուղից 5—6 կիլոմետր դեպի արևմուտք, բարձր լեռնագագաթի վրա գտնվում է «Կիչանի անապատը»։ Հուշարձանը բաղկացած է երկու խմբից. Ա. մի զույգ մատուռներ, դրանց դիմացը գավիթ և Բ. մի քիչ հեռուն եկեղեցի՝ շինված XVIII դարում։ Այս բոլորի շուրջը փռված է գերեզմանատունը՝ XVIII—XIX դարերի տապանաքարերով։*

***273. ԽԱՉՔԱՐ, մեծ, ագուցված է հարավային մատուռի արևմտյան պատին (երեսով գավթի մեջ), ստորին մասում մնացել է 6 տող.***

ԹԻՎԼՈԽ ԷՍՄԱ
ՐԸՍՏԵՓ ԱՆՈՍԿ
ԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍԲ
ԱՐԵՀԽԱՒՍՃՈԳՈՅԻՄՈ
ԾՆՈՂԱՑԻՄՈՑՈՅՔԿԱ
ՐԳԱՅՔԶԻՍՅԱՂԱԻԹՍ

ԹՎ. :ՈԽ: (1191) ԵՍ ՀԱՅՐ ԸՍՏԵՓԱՆՈՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ ԲԱՐԵՀԽԱՒՍ ՀՈԳՈՅ ԻՄՈ, ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ. ՈՅՔ ԿԱՐԴԱՅՔ ԶԻՍ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

Ծանոթ. *Վերջից կտրված է։ ԲԱՐԵՀԽԱՒՍ համարում ենք բարբառային (խմբ.)։*

***274. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային մուտքի կիսակամար բարավորի վրա, արտաքուստ.***

ԹՎՆԱՌ
ՅԻՇԱՏԱԿԷՍԲ
ԵԿԵՂԵՑԻՍՄԻՆԱՍ
ԻՈՐԴԻՊԱՊԱՍԻՆԱՂ
ՕԹԻՔՅԻՇԵՑԷՔԵԻ
ԱՌԸՋՋԵՂՅԻՇԷՔՆ

ԹՎԻՆ :ՌՄԸ: (1759), ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ. ԵԿԵՂԵՑԻՍ ՄԻՆԱՍԻ ՈՐԴԻ ՊԱՊԱՍԻՆ, ԱՂՕԹԻՔ ՅԻՇԵՑԷՔ ԵՒ ԱԾ. ԸՋՋԵՂ ՅԻՇԷ. ԱՄԷՆ:

***275. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, տափակ, երեսին գավազան և 2 տող.***

ԱՅՍԷՏԱՊԱՆՏՐԳՐԻԳՈՐԻՆ:ՈՐԷՐՄԻԱԲԱՆԽՕԹ
ԱՎԱՆՔԻՆՍԱՅՈՐԴԻԷՐՍԻՄԷՕՆԻՆ:ՌԲՃ ՄԷԿԹՎ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏՐ. ԳՐԻԳՈՐԻՆ, ՈՐ ԷՐ ՄԻԱԲԱՆ ԽՕԹԱՎԱՆՔԻՆ, ՍԱՅ ՈՐԴԻ ԷՐ ՍԻՄԷՕՆԻՆ :ՌԲՃ ՄԷԿ ԹՎԻՆ. (1752):

## 13. ԴԱՋԱՆՋԻ ԳՅՈՒՂ

***276. Ս. ԳԵՎՈՐԳ եկեղեցու մուտքի բարավորի վրա.***

Սուրբ Գէորգայ [է] եկեղեցիս. թվ. :ՌՃԻ: (1671):

*Հրատ. Բարխուդարեանց, 213։*